Բ. Պիոտրովսկուն միշտ էլ գրավել է աշխատանքը երիտասարդության հետ։ Մի շարք տարիների ընթացքում Լենինգրադի համալսարանի պատմության և արևելագիտության ֆակուլտետներում նա հատուկ կուրս է կարդացել Անդրկովկասի և Հին Արևելքի հնագիտության վերաբերյալ։

Վարչական բարձր պաշտոններում գտնվելով, Բորիս Բորիսովիչը մշտապես և համառորեն նպաստում է Կովկասի և Լենինգրադի հնագետների միջև մշտական կապերի իրականացմանը։ Վերջին տարիներս զգալիորեն ընդլայնվել են կապերը նաև արտասահմանի հնագետների հետ։ Լինելով համաշխարհային հռչակ ունեցող գիտնական, նա մշտապես ներկայացնում է մեր երկիրը միջազգային համաժողովներում՝ Հռոմում (1955), Մյունխենում (1957), Լոնդոնում (1963—1966), Նյու-Դելիում (1964), Նյու-Յորքում (1965)։ Նա թանգարանների միջազգային կոմիտեի անդամ է, Դելիի համալսարանի պատվավոր դոկտոր, Բրիտանական ակադեմիայի թղթակից-անդամ, Գերմանական հնագիտական ընկերության թղթակից-անդամ, Պրագայի Կարլովյան և Կահիրեի համալսարանների Եգիպտաբանական ինստիտուտի պատվավոր անդամ, Ֆլորենցիայի Նախապատմության ընկերության պատվավոր անդամ։ Օրերս նա ընտրվեց նաև Բավարական ակադեմիայի պատվավոր անդամ։ Նրա՝ կոմունիստ-հայրենասերի եռանդուն հասարակական գործունեությունն իր լայն գործադրումը գտավ աշխատավորների գեղուստաների Լենինգրադի սովետում, Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության համառուսաստանյան ընկերությունում, «ՍՍՀՄ—ԱՄՆ», «ՍՍՀՄ—Ֆինլանդիա» և «ՍՍՀՄ—Իտալիա» ընկերություններում։ Բ. Բ. Պիոտրովսկին պարգևատրվել է Լենինի, երեք Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով և մի քանի մեդալներով։

Հայ ժողովուրդը բարձր է գնահատում այդ անխոնջ գիտնականին, որի բազմամյա հետազոտությունների շնորհիվ բացահայտվեցին հայ հինավուրց երկրի հազարամյա պատմության շատ էջերը։

Կ. ՔՈՒՇՆԱՐՅՈՎԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հայաստանի գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու համար 1968 թ. մարտի 26-ին ակադեմիայի նիստերի դահլիճ էին եկել ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, գիտահետազոտական հիմնարկների ղեկավարներ և բաժինների վարիչներ, արդյունաբերության և մշակույթի տարբեր բնագավառի ներկայացուցիչներ։ Տարեկան ժողովի աշխատանքներին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Ա. Ե. Քոչինյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ ընկ. Բ. Հ. Մուրադյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկ. Ն. Խ. Հարությունյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Ռ. Հ. Խաչատրյանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ ընկ. Լ. Ա. Ստեփանյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար ընկ. Լ. Պ. Ղարիբջանյանը։

Ընդհանուր ժողովը ներածական ճառով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Խոսելով սովետական գիտության նվաճած նոր բնագծերի մասին, նա կանգ առավ այն առաջընթացի վրա, որ գիտության բնագավառում ձեռք է բերել հայ ժողովուրդը 1967 թ. ընթացքում, ընդգծեց կուսակցության և ժողովրդի անգուլ հոգատարությունը հայրենական գիտության նկատմամբ։

Հայաստանի գիտնականների աշխատանքը բարձր գնահատվեց ժողովրդի, կուսակցության, կառավարության կողմից։ Բյուրականի աստղադիտարանը արժանացավ ՍՍՀՄ բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի, Հանրապետության գիտությունների ակադեմիան պարգևատրվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, ՀՍՍՀ Մինիստրների սովետի, Գերագույն սովետի նախագահության և ՀԱՄԽ-ի հուշագրոշով։

Տարեկան ժողովը քննարկեց ակադեմիայի 1967 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները։ Հարցի քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ս. Դավթյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ա. Բ. Նալբանդյանը, Ա. Ս. Ղարիբյանը, Ս. Տ. Երեմյանը, Ա. Ա. Առաքելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ե. Պ. Աղայանը, պատմության ինստիտուտի դիրեկտոր Գ. Ա. Գալոյանը, պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանը, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ Ա. Պ. Սիմոնյանը։

Ակադեմիայի տարեկան հաշվետվությունից պարզվեց, որ 1967 թ. ընթացքում ակադեմիայի

27 գիտահետազոտական հիմնարկներում մշակվում էին 95 պրոբլեմ՝ 473 թեմայով։ Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ֆիզիկամաթեմատիկական կոմպլեքսի և կենսաբանության ու քիմիայի նոր ուղղությունների զարգացման վրա։ Ստեղծվել է ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ։ Ամրապնդվել են կապերը այլ հանրապետությունների գիտական կենտրոնների, Մոսկվայի, Լենինգրադի, Նովոսիբիրսկի գիտական հիմնարկների հետ, ընդլայնվել են համատեղ աշխատանքների շրջանակները։ Մեծ բաժին էր կազմում հասարակական գիտությունների գծով մշակվող թեմատիկան՝ 45 պրոբլեմ, 263 թեմա։ Լայն ճակատով աշխատանքներ են տարվել պատմության, գրականության, տնտեսագիտության, արվեստի, լեզվի, հնագիտության ու ազգագրության ինստիտուտներում, փիլիսոփայության ու իրավունքի և արևելագիտության սեկտորներում։ Այս հիմնարկներում հաշվետու տարում աշխատում էին 582 հոգի, որից 22 ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, 37 գիտության դոկտորներ, 214 գիտության թեկնածուներ։

Պատմության ինստիտուտի հիմնական հարցերից մեկը սոցիալիստական և կոմունիստական շինարարության պրոբլեմի ուսումնասիրությունն է։ Հաշվետու տարում լույս տեսավ հայ ժողովրդի պատմության VII հատորը՝ Հայկական ՍՍՀ-ն սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում (1917—1940)։ Աշխատության մեջ լուսաբանվում է Հայաստանի աշխատավորների պայքարը հանուն սովետական իշխանության հաղթանակի, սոցիալիստական հեղափոխության հսկայական նշանակությունը հայ ժողովրդի պատմական բախտի համար։ Ավարտվել է նաև մենագրություն՝ նվիրված սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությանը։ Ավելի են ընդլայնվել աշխատանքները ստրկատիրական, ֆեոդալական և կապիտալիստական հասարակարգերի, հայ գաղթավայրերի, հայ պարբերական մամուլի պատմության պրոբլեմների ուսումնասիրման բնագավառում։ Ավարտվել են «Ուրվագծեր XIX դարի II կեսի արևելահայ հասարակական հոսանքների և ազգային քաղաքական կուսակցությունների պատմության», «Ազգային ազատագրական շարժումը Վասպուրականում և արմենականները», «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» մենագրությունները։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը շարունակել է հետազոտական աշխատանքները Հայաստանի հնագիտական ուսումնասիրության, Հայաստանի ազգագրական ուսումնասիրության, հայկական բանահյուսության պրոբլեմների ուղղությամբ։ Հնագիտական աշխատանքների հիմնական արդյունքները ամփոփված են «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի I—III հատորներում։ Հրատարակության են հանձնված «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի I և II պրակները։ Հնագիտական հուշարձանների ուսումնասիրության հետ մեկտեղ ուսումնասիրվել են ուրարտական և հայկական արձանագրությունները։ Հրատարակության է հանձնվել «Դիվան հայ վիմագրության» պրակը։ Շարունակել են գործել Լճաշենի, Մեծամորի, Կարմիր բլուրի, Արինբերդի, Նոր Արմավիրի, Գառնիի, Հին Արմավիրի, Լոռվի հնագիտական, ինչպես և ազգագրական-բանահյուսական և վիմագրական արշավախմբերը։ Դաշտային աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են նյութական կուլտուրայի նոր հուշարձաններ և էպիգրաֆիկ նյութեր, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայաստանի պատմության և մշակույթի համար։ Կարևոր արդյունքներ տվեցին Արինբերդի (Էրեբունի), Նոր Արմավիրի (Արգիշտիխինիլի) և քարայրներն ու ժայռապատկերները ուսումնասիրող արշավախմբերի աշխատանքները։ III—I (մ. թ. ա.) հազարամյակներին վերաբերող ժայռապատկերները արտահայտում են հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող ժողովրդի կյանքը, կենցաղը, կրոնական հավատալիքները, առասպելներն ու լեգենդները։ Ազգագրագետները հավաքել են հայ ժողովրդի սոցիալական, տնտեսական, հոգևոր կուլտուրային վերաբերող նյութեր։ Աշխատանքները տարվել են մեծ մասամբ Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի ազգագրական շրջաններում, ինչպես նաև Ռոստովի մարզի հայկական գյուղերում։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը աշխատանքները կազմակերպել է «Սովետահայ գրականության զարգացման օրինաչափությունները արդի փուլում», «Մարքս-Լենինյան գրականագիտություն», «Հայ նոր գրականություն», «Հայ գրականության կլասիկների երկերի հրատարակում» և «գրական կապեր։ պրոբլեմների ուղղությամբ։ Հրատարակվել է «Հոկտեմբերը և հայ գրականությունը» ժողովածուն, որը նվիրված է Սովետական Հայաստանի գրականության սկզբնավորմանն ու զարգացմանը, նրա գեղարվեստական մեթոդին, հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև բազմազգ սովետական գրականության մյուս ջոկատների հետ գաղափարական միասնության խնդիրների լուսաբանմանը։ Մոսկվայում հրատարակվեց «Սովետահայ գրականության պատմությունը» մեկ հատորով, որը Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի կողմից հրատարակվող «ՍՍՀՄ ժողովուրդների սովետական գրականության պատմության» բաղկացու-

ցիչ մասն է կազմում։ Տպագրության են հանձնվել Եղիշե Չարենցի ստեղծագործությունների IV և VI հատորները, Հ. Պարոնյանի երկերի VII, Ռ. Պատկանյանի երկերի VI—IX հատորները, հրատարակվել է Ռ. Պատկանյանի ստեղծագործությունների IV հատորը։

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը շարունակել է այն աշխատանքները, որոնք նվիրված են հայերենի զարգացման օրինաչափություններին՝ կապված հայկական սոցիալիստական ազգի զարգացման հետ, ինչպես նաև բառարանագիտության, բառագիտության, հայոց լեզվի պատմության, հայկական բարբառների ուսումնասիրման հարցերին։

Արվեստի ինստիտուտը աշխատանքները շարունակել է երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կինոյի, կերպարվեստի և կիրառական արվեստի, շեքսպիրագիտության և մշակութային կապերի պրոբլեմների բնագավառում։ Աշխատանք է տարվել հայկական երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության, թատրոնի պատմության բազմահատորյակների, հայկական արվեստի պատմության և տեսության հարցերը լուսաբանող մենագրությունների ստեղծման, հայկական դասական երաժշտության (Կոմիտաս, Ռոմանոս Մելիքյան, Ալ. Սպենդիարյան) ստեղծագործությունների ակադեմիական հրատարակության ուղղությամբ։ Ավարտվել է հայկական գուսանական երաժշտության անթոլոգիան։ Ավարտված են հայկական ճարտարապետության պատմության I և II հատորները՝ նվիրված Ուրարտուի ճարտարապետությանը և վաղ միջնադարի ճարտարապետությանը։ Շեքսպիրագիտության կենտրոնը լույս ընծայեց «Շեքսպիրականի» I հատորը։

Արևելագիտության սեկտորում գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունը եղել է Մերձավոր Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը, ազգային փոքրամասնությունների պրոբլեմը Օսմանյան կայսրությունում, Արևելքի երկրների հայկական գաղութների ուսումնասիրությունը, քուրդ ժողովրդի պատմության, լեզվի, կուլտուրայի և ազգագրության հարցերը։ Ավարտվել են «Ազգային հարցը ժամանակակից Իրանում», «Հակաիմպերիալիստական պայքարը Սիրիայում 1947—58 թթ.», «Արաբական Արևելքը և ընդհանուր շուկան», «Եգիպտոսի հայկական գաղութը 1917—1965 թթ.» և այլ աշխատություններ։

Փիլիսոփայության սեկտորը իր աշխատանքները տարել է սոցիալիզմի զարգացման և կոմունիզմին անցնելու օրինաչափությունների, դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի, հայ փիլիսոփայության պատմության, մարքս-լենինյան էսթետիկայի, պետության և իրավունքի հարցերի գծով։

Տնտեսագիտության ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում գլխավոր ուշադրությունը դարձվել է այնպիսի տեսական և գործնական խնդիրներին, ինչպիսիք են հանրապետությունում սոցիալիստական արտադրության արդյունավետության բարձրացման հարցերը։ Դրանք ընդգրկել են արտադրության կառուցվածքի առաջադիմական տեղաշարժերը, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության բարձրացումը, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, արտադրության նյութական խթանման հարցերը։

Ընդհանուր ժողովում խոսվեց նաև ակադեմիայի միջազգային կապերի մասին, որոնք տարեց-տարի գնալով ընդլայնվում են։ 1967 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի աշխատակիցներից 50 մարդ մեկնել է արտասահման՝ միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու, համատեղ հետազոտություններ կատարելու և արտասահմանյան գիտության նվաճումների հետ ծանոթանալու համար։ Ակադեմիան նույն մեկ տարվա ընթացքում ընդունել է 326 օտարերկրացու։ Գրքափոխանակության կետերի թիվը արտասահմանում ավելացել է 210-ով և այժմ նրանց թիվը 45 երկրներում հասել է 860-ի։ Միայն օտար լեզվով ձեռք է բերվել 37000 գրադարանային միավոր։ Այժմ գրադարանային 2295 հազար միավորից 700 հազարը արտասահմանյան լեզուներով է։ Միջազգային գիտական կապերի ուժեղացման շնորհիվ էլ ավելի աճեց հայ գիտնականների հեղինակությունը։ Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը 1967 թ. ընտրվեց իտալական ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, նրան շնորհվեց Լյեժի (Բելգիա) և Կարլովի (Չեխոսլովակիա) համալսարանների պատվավոր դոկտորի աստիճան։

Ժողովում առաջ քաշվեցին մի շարք հարցեր, որոնք կնպաստեն գիտության հետագա զարգացմանը, կօգնեն գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը։ Առանձնապես ընդգծվեց նոր ուղղությունների գծով բարձրորակ գիտական կադրերի պատրաստման և հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում քանակական մեթոդների կիրառման նպատակով ժամանակակից տեխնիկայով հագեցած նոր լաբորատորիաներ ստեղծելու անհրաժեշտությունը։

Ժողովում լսվեցին ակադեմիկոս Ա. Կարինյանի «Մ. Գորկին և հայ կուլտուրան» և տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Գասպար-

յանի «Երկֆազ հոսանքի հիդրոդինամիկայի մի քանի հարցերի մասին» զեկուցումները։

* * *

Ընդհանուր ժողովը ընտրեց ակադեմիայի նոր ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, անցկացրեց նախագահության անդամների մասնակի ընտրություններ։

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկին (հնագիտություն), Ծատուր Պավելի Աղայանը (ՍՄԿԿ պատմություն), Արաքսի Թովմասի Բաբայանը (քիմիա)։

Թղթակից-անդամներ ընտրվեցին Բարկեն Նիկոլայի Առամելյանը (հնագիտություն), Գևորգ Բեղլարի Ջանուկյանը (լեզվաբանություն), Համլետ Հարությունի Վարդապետյանը և Յուրի Ֆեոդորովիչ Օլովը (միջուկային ֆիզիկա և տարրական մասնիկների ֆիզիկա), Արծրունի Մարտիրոսի Գասպարյանը (քիմիական տեխնոլոգիա), Գուրգեն Տիգրանի Թադևոսյանը (քիմիա), Վահան Գրիգորի Մխիթարյանը (բիոքիմիա), Սևադա Ալեքսանդրի Բակունցը (կենդանիների ֆիզիոլոգիա)։

Ակադեմիան այժմ իր կազմում ունի 43 իսկական և 45 թղթակից-անդամ։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան անցկացվեցին պրեզիդենտի ընտրություններ։ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ վերընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Նախագահության անդամ և ֆիզիկա-տեխնիկական ու մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար վերընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Մ. Ջրբաշյանը։

Նախագահության անդամ և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց Հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Մ. Դ. Ներսիսյանը վերընտրվեց ակադեմիայի նախագահության անդամ։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ XV ԳԻՏԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Սկսած 1952 թ., ամեն տարի տեղի է ունենում ՍՍՀՄ ԳԱ և Սովետական Միության որևէ ազգային հանրապետության ԳԱ օտար լեզուների ամբիոնների համատեղ գիտա-մեթոդական սեսիան։

XV գիտա-մեթոդական սեսիան, որը կազմակերպվել էր ՍՍՀՄ ԳԱ և Հայկական ՍՍՀ ԳԱ օտար լեզուների ամբիոնների կողմից, անցկացվեց Երևանում 1967 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 25-ը։ Սեսիան կոչվում էր Հոբելյանական, որովհետև համընկնում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին և այդ կապակցությամբ էլ մի շարք զեկուցումներ նվիրված էին սովետական լեզվաբանության նվաճումներին և ԳԱ օտար լեզուների ամբիոնների գործունեությանը այս հիսնամյակում։

Սովետական Միության բոլոր ազգային հանրապետությունների ԳԱ օտար լեզուների ամբիոններից, ինչպես նաև ՍՍՀՄ ԳԱ բաժանմունքներից և ֆիլիալներից (Լենինգրադ, Նովոսիբիրսկ, Իրկուտսկ, Յակուտսկ, Սվերդլովսկ, Կազան, Մուրմանսկ) Երևան էին ժամանել պատվիրակություններ՝ ամբիոնի վարիչների գլխավորությամբ։ Պատվիրակություններ կային նաև դեմոկրատական երկրներից (ԳԴՀ, Չեխոսլովակիա, Բուլղարիա, Լեհաստան)։ Սեսիայի աշխատանքներին, բացի հրավիրված 140 պատվիրակներից, մասնակցում էին նաև Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների օտար լեզվի դասախոսներ, լեզվաբաններ և այլ հաստատություններում աշխատող օտար լեզվի մասնագետներ։

Սեսիան ներածական խոսքով բացեց Հայաստանի ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը։ Նա նշեց, որ Հայերը շատ հեռուց սկսել են ուսումնասիրել օտար լեզուներ։

Մեսրոպ Մաշտոցը հանդիսանում է նաև օտար լեզվի մեր ամենավաղ և ամենաականավոր ուսուցիչներից մեկը, որն իր աշակերտների հետ միասին Աստվածաշունչը հունարենից թարգմանեց գրաբար, մի թարգմանություն, որը մինչև այսօր էլ մնում է անգերազանցելի։ Այնուհետև Վ. Համբարձումյանը նշեց, թե գիտական աշխատողի համար որքան կարևոր է տիրապետել որևէ օտար լեզվի։ Այժմ Հայաստանի գիտությունների ակադեմիան գիտական աշխատողներից պահանջում է տիրապետել ոչ